«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ

(Կազմված է «13» հունիս 2024թ. և բաղկացած է 6 (վեց էջից)

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 16.03.2024թ., ժամը 16:00

Համաձայն 16.02.2024թ.-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Էդուարդի Մանուկյանի կողմից ստացված դիմումը Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի մարտի 16-ին հրավիրված է Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը

Դիմումատու՝ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանը
Դիմումատու-պարտապան՝ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի կողմից ստացված դիմումը Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի վարքագծի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը և նշեց, որ սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի գործողություններում կարող են տեղ գտած լինել կարգապահական խախտումներ, որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի նկատմամբ՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի կողմից ստացված դիմումը Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի գործողություններում «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանին

2.Ուսումնասիրել բողոքաբեր Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի տրամադրած փաստաթղթերը.

3.Ուսումնասիրել կառավարիչ Արայիկ Սարգսյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին :

Ձայն վերցրեց Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Նարեկ Սամսոնյանին , ով փաստեց, որ 31.08.2020 թ.-ին ՀՀ սնանկության դատարանի վճռով Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանը ճանաչվել է սնանկ և նույն դատարանի 08.09.2020թ որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արայիկ Սարգսյանը:

Սնանկ ճանաչվելուց հետո Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանը,վերջինիս տղան՝ Խաչիկ Հարությունյանը ,և սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը պայմանավորվածություն են բերում որպեսզի Լյուդմիլա Հովհաննիսյանը ամսեկան 500/հինգ հարյուր/ԱՄՆ դոլարի չափով մարի <Արարատբանկ> ԲԲԸ-ի հանդեպ ունեցած վճարային պարտավորությունները : Սակայան կարճ ժամանակ անց սնանկության գործով կառավարիչը տեսնելով ,որ Լյուդմիլա Հովհաննիսյանը վճարունակ է և կարող է փակել իր պարտքը չեղյալ է համարում նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը և բառիս բուն իմաստով ամեն ինչ անում ,որպեսզի 24.000.000 ՀՀ դրամից ոչ պակաս շուկայական արժեք ունեցող ՀՀ ք Երևան ,Մազմանյան փողոց շենք 8բնակարան 27 հասցեի անշարժ գույքը զգալիորեն էժան գնով վաճառվի: Մասնավորապես կառավարիչը դիտավորյալ կերպով և կոպտորեն խախտելով աճուրդի կազմակերպման և անցկացման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները նախ պարտապան Լյուդմիլա Հովհաննիսյանին օրենքով սահմանված կարգով երբերք չի ծանուցել աճուրդի անցկացման օրվա և ժամի մասին ՝ վերջինս զրկվելով իր գույքը ձեռք բերելու հնարավորությունից ,երկրորդ ՝պարտապան Լյուդմիլա Հովհաննիսյանին չի տեղեկացրել գույքի գնահատման հաշվետվությունը ,երրորդ ամեն անգամ հերթական աճուրդ նշանակելով դիտավորությամբ անպես անելով ,որ դրան բացի իր նախընտրած անձից ,որևէ այլ անձ չմասնակիցի ,զգալի կերպով նվազեցրել է անշարժ գույքի գինը ,այն վաճառելով ընդամենը 18.000.000ՀՀ դրամով ընդ որում բնակարանի 18.000.000ՀՀ դրամով վաճառված լինելու մասին միայն բանավոր կերպով են տեղեկացել կառավարչից պարտապան Լյուդմիլա Հովհաննիսյանին չի տրամադրվել աճուրդի այդ թվում ՝գույքի վաճառված լինելու մասին փաստը :

Հայտեց նաև ,որ կառավարչի կողմից գույքը օտարվել է 18000.000 ՀՀ դրամ ,որի վերաբերյալ որևէ փաստաթղուղթ չի տրամադրվել ,մինչդեռ պարտավոր էր տրամադրել ,նաև աճուրդն անցկացրել է աճուրդի մասին վերջին հայտարարության հրապարակման օրվանից 39 -րդ օրը ,այսինքն ՀՀ օրենսդրությամբ սահմանված մեկ ամսվա ժամկետը լրանալուց հետո : Ստացվում է ,որ սնանկության գործով կառավարիչը ապօրինի գործողությունների հետևանքով ընդամենը 11.564.74ԱՄՆ դոլար որը կազմում է 4, 600.000 ՀՀ դրամ պարտքի դիմաց պարտապանին պատկանող 24000.000ՀՀ դրամից ոչ պակաս արժողությամբ ՀՀ ք Երևան ,Մազմանյան փողոց 8 շենք թիվ 27բնակարանը վաճառել է 18.000.000ՀՀ դրամով :

Ավելացրերց ,որ սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը ՀՀ ք Երևան ,Մազմանյան փողոց 8 շենք թիվ 27բնակարանը վաճառել է 18.000.000ՀՀ դրամով ,իսկ պարտապանի պարտավորությունը կազմում է 4, 600.000 ՀՀ դրամ,իսկ մնացած13.400.000 ՀՀ դրամ գումարը կառավարիչը պարտավոր է փոխանցել պարտապան Լյուդմիլա Հովհաննիսյանին ,որը մինչ օրս չի կատարվել և միգուցե կառավարիչը եկամուտ ստանալու նպատակով պարտապանին վերադաձվող ենթակա գումարը շրջանառության մեջ դրած լինի :

Բացի դա Լյուդմիլա Հովհաննիսյանի ներկայացուցիչը բողոքում նշում է ,որ Արայիկ Սարգսյանը չարաշահելով իր լիազորությունները սնանկության գործի շրջանակներում <յուրացրել > է Լյուդմիլա Հովհաննիսյանի բանկային քարտում եղած 700.000 ՀՀ դրամ գումարը : Նշված գումարը չի ուղղվել պարտքի մարմանը ,ուստի հարց է առաջանում թե ուր է գնացել այդ գումարը կամ ինչ նպատակով է այն օգտագործվել :Այսպիսով հիմք ընդունելով վերոգրյալը կարող ենք փաստել ,որ սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը սնանկության գործի շրջանակներում իր լիազորությունները իրականացնելիս դիտավորությամբ դրանք զգալիորեն գերազանցել է արդյունքում թույլ տալով Օրենքի պահանջների ակնհայտ ու կոպիտ խախտումներ:

Ձայն վերցրեց սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը ,ով հայտնեց ,որ նախ ուզում եմ անդրադառնալ դիմումով նշված հանգամանքներին `

Պայմանավորվածություն որպեսզի պարտապանը ամսեկան վճարումով մարի բանկի հանեպ ունեցած իր պարտավորությունները նման պայմանավորվածություն չի եղել և հայտնեց ,որ պարտապանը արդեն իսկ սնանկ է ճանաչվել ,չկա ֆինանսական առողջացման ծրագիր և հետևաբար հնարավոր չէ նման պայմանավորոված ություն ձեռք բերել :

Ինչ վերաբերվում է գույքը զգալի էժան գնով վաճառելուն ,ապա հայտնեց ,որ իր գործողություններում հիմնվել է< Հրապարակային Սակարկությունների մասին >ՀՀ օրենքի պահանջներով և նաև <Սնանկության մասին> ՀՀ օրենքով :

Ավելացրեց ,որ պարտապանը նշել է ,որ գույքի գնահատման հաշվետվությանը ,աճուրդի օրվա,ժամի անցկացմանը չի ծանուցվել ,հետևաբար ներկայացրեց է պարտատիրոջն ու պարտապանին ուղարկված ծանուցման փոստային անդորրագրերի փոստային առաքանին,հանձված լինելու հանգամանքը հաշվասող փաստաթղթերի պատճենները :

Ինչ վերաբերվում է <յուրացնելուն> ապա սնանկության վարույթի ընթացքում 700.000ՀՀ դրամ գումարը ,որը առկա է եղել Արդշինբանկ ՓԲԸ -ի հաշվին կառավարչի կողմից դիմումի հիման վրա փոխանցվել է սնանկության հատուկ հաշվին ,որը մինչ օրս դեռ առկա է ,քանի որ կա ևս այլ պահանջ Անի Դավթյանի կողմից ,որի պահանջը պարտապանի կամ նրա ներկայացուցչի կամ պարտատիրոջ կողմից չի առարկվել և դեռ սնանկության գործը ընթացքում է :

Այսպիսով կառավարչիը պնդում է ,որ ներկայացված դիմումը անհիմն է և ամբողջությամբ ենթակա է մերժման :

Հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը պարտապան Լյուդմիլա Հովաննիսյանի ներկայացուցչին հղեց հետևյալ հարցը ` դիմումով խնդրել եք սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել և նշանակել սնանկության գործով նոր կառավարիչ ,քանի որ կառավարիչը իր լիազորությունները չարաշահել է և առանց օրենքի դրույթները պահպանելու իրականացրել է որոշակի գործողություններ այն է վաճառել է պարտապանին պատկանող անրաշժ գույքը աճուրդով ,որի մասին տեղեկացված չեք եղել :

Պարատան Լյուդմիլա Հովահննիսյանի ներկայացուցիչը պնդեց ,որ տեղեկացված չեն եղել գույքի գնահատման հաշվետվությանը և աճուրդներին : Սնանկության գործով կառավարիչը պնդեց ,որ և ներկայացրեց համապատասխան փաստաթղթեր ,որը ապացուցում էր ,որ և պարտապանը և պարտատերը ծանուցվել են աճուրդին և հետագա բոլոր գործողություններին :

Սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը ներկայացրեց նաև 05 մարտ 2024թ ՀՀ սնանկության դատարանի որոշումը Լյուդմիլա Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին,որով դատարանը մերժել է Լյուդմիլա Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի միջնորդությունը :

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը հնչեցրեց այն հարցը ,որ դիմումում անդրադառցվել է այն փաստին ,որ աճուրդով շուկայական գնից էժան վաճառվել է

պարտապանին պատկանող գույքը և պարտավորությունը մարելուց հետո հետ չի վերադարձվել պարտապանին վճարման ենթակա գումարը :

Սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանը հայտնեց ,որ սնանկության գործի շրջանակներում պարտապանին պատկանող ՀՀ ք Երևան ,Մազմանյան փողոց 8 շենք թիվ 27բնակարանը վաճառել է 18.000.000ՀՀ դրամով ,մինչդեռ պատապանի պարտավորությունը կազմում է 4, 600.000 ՀՀ դրամ :

Հավելեց ,որ սնանկության գործի շրջանակներում առկա է նաև այլ պահանջ Անի Դավթյանի կողմից ,ով աճուրդով ճանաչվել է ՀՀ ք Երևան ,Մազմանյան փողոց 8 շենք թիվ 27բնակարանի հաղթողը ,սակայն պարտապանի կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա սնակության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի ,աճուրդում հաղթող Անի Դավթյանի աճուրդ անվավեր ճանաչեու մասին ՀՀ սնանկության դատարանին 14.03.2023թ կայացրած վճռով հայցը բավարավել է :

Անի Դավթյանի կողմից ներկայացվել է վերաքննից բողոք :ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.07.2023թ որոշմամբ բավարավել է վերաքննիչ բողոքը և ՀՀ սնանկության դատարանի 14.03.2023թ վճիռը բեկանվել է և փոփոխվել Լյուդմիլա Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Լյուդմիլա Հոհհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի ,պատասխանող Անի Դավթյանի աճուրդն անվավեր ճանաչեու պահանջի մասին մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.07.2023թ որոշման դեմ Լյուդմիլա Հովհաննիսյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք ,որը 18.10.2023թ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոք վարույթ ընդունելը մերժվել է :

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՀՀ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի կողմից ստացված դիմումը Լյուդմիլա Վաղարշակի Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ Արայիկ Սարգյանի գործողություններում չկան խախտումներ, վերջինս գործել է ՀՀ Օրենսդրության շրջանակներում և գործողությունները իրականացրել է բացառապես <Սնանկության մասին > ՀՀ օրենքի

պահանջով և առկա չէ «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքեր, ուստի գործողությունների բացակայության պատճառաբանությամբ հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան